ցաք ասեն արդելուլ զվարդապետան Հայոց 'ի տեղւոջէ յայնմանէ։ Սակայն փոխանորդք Հայոց և Ցունաց պըն-դէին և յայտնի կացուցանէին զբռնութիւնս երից կրօնաւորաց, եւ պահանջէին զիրաւունս, այլ նոքա դարձեալ յուրաստ լինէին։ Եւ այսպէս յերկարիլ դատաստանին և վիճմանց, խնդրեաց դատաւորն վկայս 'ի փոխանորդէն Հայոց, և նորա ածեալ կացոյց առաջի նորա զերկուս ոմանս յերեւելի այլազգեաց քաղաքին, որք եւ ասէին, լուաք զձայն աղաղակի եւ կռուոյ յեկեղեցին Ս. Ցարութեան 'ի Խանքէ կոչեցեալ մենաստանէ մերմէ, և կարկառեալ 'ի պատուհանաց, որք հային 'ի հրապարակ Գերեզմանին, տեսաք զերիս կրօնաւորս Լատինաց, որք մահակ 'ի ձեռին հարկանէին զվարդապետն Հայոց. զնոյն ասացին և միաբանք Հայոց և Ցունաց, որք էին ընդ Աբրահամու 'ի տաճարի անդ, եւ զոր ինչ գործեցին Լատին կրօնաւորք։ Ցետ հաստատելոյ դատաւորին 'ի գիր զբընութիւնն եւ զվկայութիւնս նոցա, յաւել փոխանորդն Հայոց, որովհետեւ յայսպիսի դժնդակ իրս գտանին Լատինք՝ ապաւինեալ 'ի թագաւորս Եւրոպիոյ, 'ի ճոխութիւնս և 'ի բազմութիւնս իւրեանց, արդելուն և անարգեն զուխտաւորս մեր, եւ յափշտակեալ 'ի ձեռաց նոցա զմոմեղէնս շիջուցանեն և ընկենուն 'ի բաց. յայսպիսի զըզուանաց և յատելութենէ նուազին ուխտաւորք մեր, եւ մեք հանդիպիմք բազմադիմի վնասուց և զրկանաց. և եթէ ոչ լինիցի խնամք և պաշտպանութիւն Օսմանեան տէրութեան 'ի վերայ հպատակաց իւրոց, դժուարին լինի բնակութիւն մեր յԵրուսաղէմ եւ 'ի Ս. Ցարութիւն. զի անձինք մեր իսկ կան 'ի վտանգի. զի 'ի նուազիլ ուխտաւորաց մերոց վնաս հասանէ դանձուց Սրբոյն։ Եւ դատաւորն զայս ամենայն հաստատեալ 'ի գրի՝ ետ ցփոխանորդն Հայոց, եւ մեկնեցան անտի 'ի տեղիս իւրեանց, ՌՌՀ (1742)։

Իսկ Գրիգոր Պատրիարք 'ի խռովութեանս յայսմիկ՝ կըրեաց բազում վիշտս և նեղութիւնս, և հանդիպեցաւ մեծամեծ ծախուց և վնասուց. ապա կամեցեալ օգնութիւն գտանել նոյն իսկ 'ի մեծամեծացն Եւրոպացւոց գրեաց զկ թուղթս, մին առ թագաւորն Գաղղիոյ, մին առ երկ-